# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-01/17» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 0042, Զվարթնոց օ/կ

19 հունիսի 2017
ժամը 11:00

**ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-01/17** հայտարարված մրցույթի հայտերի բացումը կատարվել է էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Ա. Ղոսալյան | Ընդհանուր բաժնի պետ |

Հանձնաժողովի անդամներ՝

| | |
|---|---|
| Կ. Խաչատրյան | ԱԱՎ գլխավոր մասնագետ |
| Դ. Սարուխանյան | ՕՍ և ՕԵԿ վարչության պետի տեղակալ |
| Ս. Մայիլյան | ՀՀ բաժնի գլխավոր մասնագետ |
| Ա. Թաղլամազյան | ՕՓԿ վարչության պետի տեղակալ |

Հանձնաժողովի քարտուղար՝

| | |
|---|---|
| Ա. Խաչատրյան | Ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ |

## Օրակարգ

1. **ՔԱԳՎ-ԳՀԱՇՁԲ-01/17** ծածկագրով ընթացակարգի հայտեր կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում:
2. Պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.
3. Հայտարարվում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը:
4.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների /1-10 չափաբաժինների/ նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված՝

1-ին չափաբաժին – Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - 400000 ՀՀ դրամ,
2-րդ չափաբաժին - Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - 600000 ՀՀ դրամ:

Հրապարակվեց հայտեր ներկայացրած մասնակցի անվանումը և հասցեն:

«ԷԼՄԱ» ՍՊԸ, հասցե՝ ք.Եղվարդ, Երևանյան փող. 1 շենք,
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ, հասցե՝ ք.Եղվարդ, Նար Դոսի փողոց, 28 ա,
«Վանաձորի նախագծող» ՍՊԸ, հասցե՝ ք. Վանաձոր, Բաթումի 15/27,
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ, հասցե՝ ք.Երևան, Բյուզանդի 1/3,
«Սեյսմշին» ՍՊԸ, հասցե՝ ք.Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 21/3ա
«Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ, հասցե՝ ք.Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6

Արձանագրվեց, որ «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի, «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի, «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ -ի կողմից հայտերը կազմված և ներկայացված էին համապատասխան սահմանված կարգին:

«ԷԼՄԱ» ՍՊԸ-ի, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի, «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ի, «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում էին հրավերով սահմանված վավերապայմաններին:
Ընդունվեց որոշում կողմ 5, դեմ 0

Ընտրված մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են՝

| | | | Մասնակիցների գնային առաջարկները առանց ԱԱՀ ի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գնման առարկան | Նախահաշվային գին | «ԷԼՄԱ» ՍՊԸ | «Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ | «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ | «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | «Սեյսմշին» ՍՊԸ | Վանաձորի նախագծող |
| 1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | 400000 | 290000 | 850000 | 410000 | 199000 | 400000 | 2850000 |
| 2 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | 600000 | 290000 | 780000 | 400000 | 299000 | 400000 | |

**Հանձնաժողովը միաձայն որոշեց.**

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ,

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | |
|---|---|
| **Ա. Ղոսալյան** | **Հանձնաժողովի նախագահ** |
| **Կ. Խաչատրյան** | **Հանձնաժողովի անդամ** |
| **Դ. Սարուխանյան** | **Հանձնաժողովի անդամ** |
| **Ս. Մայիլյան** | **Հանձնաժողովի անդամ** |
| **Ա. Թաղլամազյան** | **Հանձնաժողովի անդամ** |
| **Ա. Խաչատրյան** | **Հանձնաժողովի քարտուղար** |